Պաշտոնական ընդդիմախոս բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Գուրգենի Մուրադյանի կարծիքը Հայկ Արարատի Հովհաննիսյանի «Զապել Եսայանի վիպաշխարհը» ատենախոսության մասին

Յուրաքանչյուր գրողի հաստատուն լինելիության չափանիշը միշտ էլ մնում է ժամանակը, որի հորձանքում հստակվում, կայունանում կամ անհետ կորչում են գրական անունները: Այսօր, առավել քան երբևէ, պարզ է դառնում, որ Զապել Եսայանի գրական ժառանգությունը ոչ միայն բռնել է ժամանակների ծանր քննությունն իր ինքնատիպ գեղարվեստական արժեքով, այլև դրանից զարգացող, ծրագրային նշանակություն ձեռք բերող ազգային գրականության առաջընթացի տեսական կանխագծումներով: Ինչպես մեր գրականության դասականներից շատերի, նրա կյանքն ու ստեղծագործությունն էլ դարձել են խորհրդանիշ իր ժամանակի ազգային կյանքի՝ հար և նման նրա պատմական ճակատագրին իր վերելքներով ու անկումներով, նաև ողբերգական վախճանով:

Հետաքրքրությունն ու ուշադրությունը Եսայան գրողի հանդեպ, որոշակի գնահատական-կարծիքներն ի հայտ են եկել նրա առաջին գրական փորձերի երևան գալու հետ և շարունակվել նրա ողջ ստեղծագործական կյանքում:

Մեր օրերում յուրաքանչյուր նոր ուսումնասիրություն կարևորվում է գրականագիտական թարմ հայացքի ուղղվածությամբ և նպատակայնությամբ, որ գալիս է լրացնելու և վերաիմաստավորելու նախորդ գրականագիտական փորձը գիտական արդի չափանիշներով և նորովի արժևորելու առավել լայն հնարավորություններով: Եվ միանգամայն հիմնավորված է առաջադրվող ատենախոսության հեղինակի՝ Հայկ Հովհաննիսյանի մտահղացումը՝ իր ուսումնասիրությամբ բացահայտել Զապել Եսայանի ծավալուն գործունեության մեջ նրա գեղարվեստական արձակի կշռույթն ու գաղափարագեղագիտական մտքի ինքնահատկությունը: 20-րդ դարասկզբից մինչև 90-ական թվականների գրական-հասարակական կյանքի ընդհանուր համապատկերում հանգամանալիորեն դիտարկվել և ներկայացվել է Զապել Եսայան գրողը, գեղագետը, ազգային հասարակական գործիչը: Զգտելով թեմայի լուսաբանման ամբողջականության՝ ատենախոսը բազմաբնույթ հարցադրումներով լրացնում, վավերագրում է գրական, հասարակական խնդիրների այն տիրույթը, որտեղ դիմորոշվում է Եսայան գրական գործչի անհատականությունը: Ուսումնասիրությունը հատկանշվում է մեթոդաբանական որոշակի սկզբունքների կիրառմամբ, փաստական նյութերի հիմնավորող հետևողական ընթացքով:

Գոհունակությամբ պետք է նշեմ, որ ատենախոսի շարադրանքի նախընտրած կառուցվածքը թույլ է տվել ներկայացնել Եսայանի ուրույն ստեղծագործական նկարագիրը՝ ամրագրված գեղագիտական և համազգային գաղափարական նշանակությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացություններից, ներկայացված է նաև օգտագործված գրականության ցանկը:

Բավականին ընդարձակ ներածության մեջ արդեն դրսևորվել է ատենախոսության հեղինակի նպատակաուղղված ջանքը՝ գիտական բարեխղճությամբ, նաև քննական մոտեցմամբ հիմնավորելու առաջադրվող թեմայի արդիականությունը, հարցի պատմությունը, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքով հաստատվող գիտական նորույթը՝ կյանքի և ստեղծագործության փաստերի ճշտումներով, գրականագիտական արժևորման նոր հայացքով:

Միանգամայն արդարացված է նաև գրողի կենսագրական անդրադարձը ներածության էջերում, քանի որ ինչպես Հայկ Հովհաննիսյանն է հաստատում ուսումնասիրության հետագա ընթացքով, Եսայանը միահյուսել է սեփական կյանքի պատմությունը իր գեղարվեստական արձակի ուրույն արտահայտություններին՝ փոխաձևելով դրանք էքզիստենցիալ տագնապի և քաղաքական ցնցումների աշխարհում:

Ուսումնասիրության բովանդակային անհրաժեշտությամբ գլուխները բաժանված են ենթամասերի, ինչը մեծապես նպաստել է քննության ընդգրկուն համակարգմանը: Այսպես՝ առաջին գլուխը՝ «Զապել Եսայանի սոցիալ-հոգեբանական փոքր արձակը» վերնագրով, ունի հետևյալ ենթամասերը՝ «Նորավեպերը», «Պատմվածքները», «Վիպակները», որտեղ ակնհայտ է հեղինակի նախընտրած ժանրային որոշարկմամբ հատկանշվող քննության եղանակը: Մոտեցումը կարևորում ենք, քանի որ սկսած փոքր արձակի քննությունից՝ հիմնավորվել են Եսայանի ժանրային հստակ հայտանիշներով տարորոշվող նորավեպերը պատմվածքները, վիպակներն ու վեպերը:

Արդեն «Ծաղիկ» հանդեսում 1885-ին տպագրված առաջին «Երգ առ գիշեր» արձակ բանաստեղծության անդրադարձից ատենախոսը բացահայտում է գրողի արձակի հուզական, հոգեբանական, խորքային արտահայտությունները՝ իրավացիորեն դիտարկելով այդ նախափորձերը իբրև Դուրյանից ներշնչանքի ամրակայված գեղաձևումներ: Սակայն քննության հետագա ընթացքն արտաբերում է Եսայանի նորավեպերում զգացումնայինին զուգադրվող հոգեվերլուծության խոհական ենթաշերտերը, որոնք պետք է դառնային գրողի բնագրաստեղծման ելակետային սկզբունքներ: Ուշագրավ է նաև ատենախոսի նկատումը Եսայանի նորավեպերում թաքնված գաղափարախոսության առկայության հատկանիշի մասին: «Հանցավոր կինը», «Մրցումը», «Միրո վրեժը», «Ցավին հեշտանքը» նորավեպերի հանգամանալի վերլուծություններն ի հայտ են բերում Եսայանի կերպարաստեղծման առանձնահատկությունները: Եսայանի նորավեպերում տեսնելով Զոհրապի և այլոց դասական նորավեպերից դիպաշարային ընդհանրություններ՝ Հովհաննիսյանը շեշտում է հեղինակի նորավեպերում մարդկային դրամաների նոր, բազմաշերտ արտահայտությունների երևակումներ: Կնոջ կերպարի ֆեմինիստական հայեցակարգից Եսայանը, նորավեպերի առանցքում պահելով կին հերոսուհիների, ավելացնում է տղամարդ կերպարների հոգեբանական արծարծումների շրջանը՝

դրանով իսկ լայնացնելով մարդկային դրամաների պատկերման տրամաբանական սահմանները:

Հոգեբանական նուրբ բացահայտումների ծիրում են դիտարկվում նաև Եսայանի պատմվածքները: Սոցիալ-կենցաղային հարաբերությունների հիմքով անհատի և հասարակության բախման, ընտանեկան կյանքի բազմակերպ դրսևորումներում Հովհաննիսյանն ընդգծում է այն նորը, որ բերում էր Եսայանը արևմտահայ պատմվածքի ժանրային բովանդակության վերաիմաստավորումներով:

Ատենախոսության առաջին գլխի «Վիպակները» ենթամասում Հովհաննիսյանը ժանրի եսայանական օրինակները բնութագրում է նոր մոտիվների, հոգեբանական կերպարակերտման փոխաձևումների, և որ կարևորն է, ներքին օտարման, ինքնության ճգնաժամի թեմաների կիրարկումների նշանակությամբ: «Սպասման պահին մեջ» վիպակի կենցաղային սարսռացնող պատկերները համադրված են դիտվում մոր զոհողությունների և ոտնահարվող մարդկային արժանապատվության, ինչպես նաև ընտանեկան հարաբերությունների անակնկալ շրջադարձերի սիրային եռանկյունու երևույթով:

Հետաքրքիր է ատենախոսի նկատումը վիպակի հերոսների ինքնաբացահայտվող, ինչպես նաև փոխադարձաբար միմյանց լրացնող նկարագրերի՝ Եսայանի կերպարակերտման հոգեբանորեն համոզիչ սկզբունքի մասին: Կերպարակերտման եսայանական առանձնահատկություններից հայտկանշվում է նաև ոչ միագիծ բնութագրերի հավաստի կերպավորումների եղանակը՝ դրական-բացասական հակադրությունից դեպի իրական հերոսների լայնաբնույթ պատկերման մեթոդի կիրառմամբ:

«Վերջին բաժակը» վիպակի գնահատման ելակետն ընդունելով թեմայի թարմությունն ու կառուցվածքային նոր արտահայտությունը՝ ատենախոսը հակված է զուգադրելու հերոսուհու՝ Ադրինեի և հեղինակի անհատականությունները՝ հերոսուհու նախատիպ համարելով հենց հեղինակին՝ իր կյանքի պատմության ընդհանրությամբ:

Ժամանակագրական հերթագայությամբ հետազոտողի քննությամբ հաջորդ գործը 1919-ին գրված և 1922-ին տպագրված «Հոգիս աքսորյալ» վիպակն է, որ բնութագրվում է խոհական, քնարական երկի հատկանիշներով՝ իբրև «խոհափիլիսոփայական մի պատում՝ արվեստի և արվեստագետի մասին»:

Զգտելով վիպագրուհու արձակի բազմաժանր արտահայտությունների ամբողջական պատկերի ներառմանը՝ «Արգելքը» վիպակի վերլուծությամբ ատենախոսն ի հայտ է բերում Եսայանի արձակի ևս մի առանձնահատկությունը՝ ներդիր ժանրի առկայությունը, հավելում է նաև խորհրդանշական պատկերների կիրարկումը՝ պատումի ընթացքի ոճական արտահայտչաձևերի համահունչ լուծումներով:

Ուսումնասիրության 2-րդ գլխում՝ «Ժամանակաշրջանը և մարդը Զապել Եսայանի վիպաշխարհում» վերնագրով ենթամասերը բաժանվում են վիպագրուհու

կենսագրության ստեղծագործական ժամանակահատվածների տրամաբանությամբ՝ Պոլսյան ժամանակաշրջան, Փարիզյան, Կիլիկյան և վերջինը՝ Խորհրդային ժամանակաշրջան:

Պոլսյան ժամանակաշրջանը ատենախոսը սկսում է հեղինակի արխիվում պահվող «Ինքնակենսագրություն» պայմանական անվանումով անավարտ ձեռագիր գործի քննությամբ, որտեղ վիպագրուհին իր պատումը տանում է մանկություն-պատանեկությունից մինչև 1895-ին Փարիզ մեկնումը: Ատենախոսի ուշադրությունը գրավում են վիպագրուհու ազգային մտածողության ձևավորման ակունքները դպրոցական տարիներից: Պոլսյան ժամանակաշրջանի առավել բնորոշ ստեղծագործական նմուշ է դիտարկվում «Հլուններ և ըմբոստներ» վիպակը՝ տպագրված 1906 թ.-ին Կահիրեում: Ատենախոսի դիտարկմամբ նորություն էր արդեն թեման՝ պոլսաբնակ հայ բանվորների կյանքից: Իրավացի է հետազոտողի գնահատումը վիպակում գեղարվեստական լուծումների և կերպարների ոչ բավարար համոզչության իմաստով, սակայն կարևոր է նրա նկատումն այն մասին, որ հեղինակն այնքան է կարևորել թեման, որ տասնամյակներ անց թեմայի գեղարվեստական մշակմամբ ներկայացրել է արդեն «Կրակե շապիկ» վերտառությամբ վիպակը:

Կրակե շապիկի աղքատության ու թշվառության խորհրդանիշով հատկանշվող վիպագրուհու մանկության հուշերից սկիզբ առնող պատումի քննությունը ատենախոսի հայացքով լայնացնում է վիպակի խնդրադրության սահմանները՝ նախորդ վիպակներում ի հայտ բերված հոգեբանական պատկերման շրջանից: Կերպարների համոզչության սկզբունքի հետ, ըստ ատենախոսի, վիպակի դիպաշարում առանցքային է դառնում սոցիալական դաժան անհավասարության դեմ հասունացող ընդվզման պայքարի գիտակցությունը: Ատենախոսը նույն գաղափարների գեղարվեստականացման զուգահեռը տեսնում է նաև Եսայանի «Բարպա Խաչիկ» վեպում՝ շեշտելով ազգային ժողովրդական զարթոնքի երևույթը, բանվորական շարժման արդարության հաստատման գաղափարով: Բայց եթե «Բարպա Խաչիկ» վեպում ատենախոսի անաչառ քննությունը վեր է հանում «խորհրդային կողմնորոշման» տարիներին գրված վեպի ծրագրային կանխագծումների գեղարվեստական պատումը թուլացնող «ծայրահեղ գաղափարականացումը», ապա «Կրակե շապիկը» ներկայացվում է անվերապահ դրվատող հիացական գնահատումներով: Եվ այստեղ մի նկատում. ուսումնասիրության շարադրանքի ընդհանուր գրականագիտական մետալեզուն երբեմն խաթարվում է անհարկի զգայական մակդիրների բնորոշումներով՝ փայլուն արտացոլում, կատարել է փայլուն՝ էջ 67,75, «խոսքարվեստի մեծագույն վարպետ» էջ 82. տարբեր առիթներով կրկնվող «շքեղաշուք Պոլիս», նաև լեզվական վրիպումներ՝ մեծամասամբ, ընձեռնվի էջ 45, 103 և այլն: Եվս մի նկատում. «Կրակե շապիկի» ռուսերեն և աղրբեջաներեն թարգմանությունը, ինչպես գրում է ատենախոսը, «գեղագիտական կողմի կարևորությամբ է» պայմանավորված, թերևս ճիշտ կլիներ

հիշել, որ 1934-ին հրատարակված վեպի թարգմանությունը խորհրդային գաղափարախոսության ինտերնացիոնալիզմի քաղաքականությանը պետք է ծառայեր:

Պոլսյան ժամանակաշրջանի ստեղծագործությունների քննությունն ամբողջանում է «Միլիհտարի պարտեզները» և «Սկյուտարի վերջալույսները» վիպակների ներկայացմամբ: Դրանցից առաջինը՝ «Միլիհտարի պարտեզները» ատենախոսի իրավացի բնութագրմամբ առանձնակի գեղարվեստական արժեքայնությամբ է որոշարկվում՝ նկատի ունենալով ստեղծագործական իրացման գեղագիտական բաղադրիչները: 1930-ականների ինքնակենսագրական վեպերի համապատկերում՝ Զորյան, Թոթովենց, Մահարի, Եսայանի վիպակը գնահատվում է պատումի անմիջական քնարականության և իրապաշտ հայացքի անխնա ճշմարտության պատկերների վարպետ համադրման դրսևորումներում: Եվ եթե հիշենք, որ Եսայանի գեղարվեստական մտածողության առանցքը քրոնոտոպն է՝ ժամանակի ու տեղի գեղարվեստականացումը՝ իրական կենսահանգամանքներով պայմանավորված, ապա միանգամայն տեղին են ատենախոսի վերլուծության մեկնակետերը վիպակի գրավչության ինքնահատուկ, երբեմն էլ անակնկալ դրսևորումների բացահայտումներով: Այսպես օրինակ՝ բնազանցական գեղագետի հայացքի տիրույթում ամբողջացող պատկերները տեսանելի զգայական վերաիմաստավորմամբ ձևակերպվում են իբրև կինեմատոգրաֆիկ մտածողության արտահայտություններ՝ գույների, բույրերի իմպրեսիոնիստական գեղանկարչության միջոցների ներթափանցման ոճական նկարագրով: Վիպակից բերվող առանձին դրվագների օրինակներով Հովհաննիսյանի դիտարկումները հաստատվում են գնահատումների տեսական եզրահանգումներով վիպակի քնարականության, ներհայեցողության, ներանձնացման նշանների զուգորդումներում:

Փարիզյան ժամանակաշրջանի Եսայանի վիպագրության քննության բարձրակետը «Կեղծ հանճարներ, վիպակի գնահատումն է: Հանգամանալիորեն դիտարկելով երգիծանքի գեղագիտական ոճավորմամբ պատումի արտասովոր բնույթը՝ ատենախոսության հեղինակը գտնում է ճշգրիտ հետազոտական ուղենիշներ՝ ինչ-որ իմաստով բացառիկ ստեղծագործական հղացքի ինքնահատուկ ասելիքի բացահայտման համար: Երգիծանքի ոճավորման եսայանական ընկալումներում ատենախոսը ճշգրտորեն հայտնաբերում է ողբերգականի ենթաշերտեր՝ ժամանակի արվեստի մարդու դրամայի փիլիսոփայական ներթափանցումների երևույթով: Ողբերգականի հետ Եսայանի վիպակի առանձնահատկություններից է դիտվում ապամիֆականացման միջոցի արտահայտությունը, հեգնանքի կիրարկման նրբին մատուցումը: Իր գնահատումների տեսական դիտարկումները հետազոտության հեղինակը հիմնավորում է գրականագետների՝ Տինյանովի, Զավեն Ավետիսյանի, Սնակ Արզումանյանի տեսական փաստարկումներով, ինչն անպայմանորեն մասնագիտական քննությունը դարձնում է արդյունավետ համադրումներով հագեցած

վերլուծություն, ինչպիսին և ներկայանում է ներկա ատենախոսությունը: Եվ հենց այդտեղ է, որ զարմանք և տարակուսանք է առաջ բերում «Կեղծ հանճարների» մասին մեր օրերում ամենածավալուն և անպայմանորեն ուշագրավ՝ տաղանդավոր գրականագետ Գրիգոր Հակոբյանի «Գրական սկանդալից մինչև սիրո հաշվեփակ» շատ կողմերով նոր մոտեցումներով հատկանշվող հետազոտության լուռ անտեսումը ատենախոսի կողմից: Եթե ատենախոսը համամիտ չէ հետազոտության ինչ-ինչ դրույթներին, նա կարող էր բանավիճել, բերել իր տեսակետները, ինչպես նա վարվել է այլ առիթներով ատենախոսության էջերում: Ինչևէ, «Կեղծ հանճարների» նրա վերլուծությամբ, նորովի արժևորման դրույթներով իրապես լիարժեքորեն են ընկալվում Զապել Եսայանի ինքնատիպ վիպակի գեղարվեստական փոխաձևումները:

Փարիզյան հատվածում ընդգրկված «Բարպա Խաչիկ» վեպը քննելիս ատենախոսն անհրաժեշտ անդրադարձ ունի անցյալ և ներկա քննադատական գնահատումներին, որոնցում գերակշռում է վեպի գաղափարական ուղղվածության «խորհրդային կողմնորոշման» պիտակը: Եվ այստեղ համամիտ ենք հետազոտողի առավել խորքային բնորոշմանն այն մասին, որ գրողի հայեցության նշանակետը դարերի իրականացած երազանքի՝ ձեռք բերած պետականության գաղափարն է:

Կիլիկյան շրջանի գեղարվեստական տարեգրությունն առանձնանում և դիմորոշվում է ազգային ողբերգության վավերագրությամբ: 1911-ին Պոլսում հրատարակված «Ավերակներու մեջ» հուշագրությունը հետազոտողի դիտարկմամբ դարձել է հայոց ջարդերի առաջին վկայություններից մեկը, նաև ցեղասպանության թեմայի արծարծման վիպագրական արտահայտության առաջին նմուշներից: Ատենախոսության հեղինակի պատկերավոր բնորոշմամբ՝ «ամբողջ աստեղծագործությունը դժոխային տեսարանների համանվագ է...»: Ինչ վերաբերում է պատկերային մտածողությանը, հետազոտողն այստեղ ևս պոետիկայի բաղկացուցիչ է դիտարկում կինոյի լեզուն, այս անգամ՝ արդեն սարսափ կինոն հիշեցնող: Հովհաննիսյանի բնորոշմամբ «միջժանրային այս երկը» խորհրդանշական իմաստներով զուգահեռվում է Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամես» շարքի հետ, և հետազոտողը փորձել է գտնել այդ կապի իրական ակունքները: Որևէ փաստական ապացույց չհայտնաբերելով՝ նա ակնհայտ նմանությունները բացատրում է մամուլից եկող առատ տեղեկությունների, իսկ ամենակարևորը՝ գեղարվեստական մտածողության տիպաբանական ընդհանրության դրսևորմամբ:

Վերջին՝ Խորհրդային ժամանակաշրջանում ընդգրկված գործերի քննությունն ունի նաև բանավիճային բովանդակություն: Հետևելով անցյալի և արդի գրականագիտական գնահատումների ընթացքին՝ հետազոտողն արժևորման ընդունելի կամ ոչ ընդունելի լինելը անպայմանորեն դիտարկում է պատմական իրականության փոխաձևումների աղերսներում և բերում իր անհամաձայնությունը այն կարծիքներին, թե Եսայանը մոլորության մեջ է եղել՝ գովերգելով Խորհրդային իրականությունը: Հայոց ջարդերի, 1915թ. եղեռնի սարսափները վերապրած

վիպագրուհին իրոք խանդավառ հույսերով է երազում իր հայրենիքի ապագայի մասին: Սակայն նրա՝ խորհրդային կողմնորոշման հերքման լավագույն ապացույցը նրա խոսքն է գրողների միությունում՝ ի պաշտպանություն Չարենցի, որ բերում է հետազոտողն իր շարադրանքում:

Ատենախոսությունն ամփոփվում է 20-ական թվականներին գրված «Նահանջող ուժեր» վեպի և «Պրոմեթևսն ազատագրված» հուշագրության քննությամբ: 1933-ից Խորհրդային Հայաստանում հաստատված Եսայանի կյանքի ողբերգական վախճանին նախորդած տարիները ատենախոսը բնորոշում է իբրև ստեղծագործական վերելքի և հայրենանվիրման ժամանակահատված:

Ամփոփելով իմ կարծիքը ատենախոսության ամբողջական բովանդակության մասին՝ կարևոր եմ համարում ընդգծել ուսումնասիրության գիտական նորույթի առկայությունը՝ վավերագրական փաստերի, գրականագիտական վերլուծությունների, տեսական ընդհանրացումների, գրողի կյանքի և գործի վերաբերյալ նոր նյութեր շրջանառության մեջ դնելու և գիտական համակարգմամբ առաջադրելու իմաստով: Ասում ենք առաջադրելու, որովհետև նկատի ունենք թեմայի ընդլայնվող շարունակության հեռանկարը:

Իր ընդհանրության մեջ աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ինչն էլ իրավունք է տալիս միջնորդելու հարգարժան խորհրդի առջև՝ Հայկ Արարատի Հովհաննիսյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի իր հայցած գիտական աստիճանը:

Բանասիրական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր Լ. Գ. Մուրադյան

Ստորագրությունը հաստատում եմ

ԵԹԿՊԻ-ի գիտական քարտուղար Գ. Հովհաննիսյան